Գիտական խորհրդի նիստ   12.07.2019թ.

1. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձի բարձրացման մասին:
2. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան հիմնադրամի կրթական գործընթացներում ուսանողների գործառույթների մասին կարգում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. Համալսարանի «Տնտեսագիտություն» և «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությունների ուսումնական պլանների հաստատման մասին:
4. Պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդի որակավորման գործի քննարկում և փակ գաղտնի քվեարկության անցկացում:
5. Համալսարանի ամբիոնի վարիչների թափուր պաշտոնների հավակնորդների անձնական գործերի քննարկում և փակ գաղտնի քվեարկության անցկացում:
6. Ատենախոսական թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին:
7. Ընթացիկ հարցեր:

*Օրակարգային հարցերի որոշումների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝*

1. Հաստատվեց համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի՝ 2019թ. սեպտեմբերի 1-ից բարձրացված վարձատրության չափի սանդղակը:
2. Հաստատվեց «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան հիմնադրամի կրթական գործընթացներում ուսանողների գործառույթների մասին կարգը» փոփոխություններով, լրացումներով և նոր խմբագրությամբ:
3. Հաստատվեց «Տնտեսագիտություն», «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությունների վերանայված ուսումնական պլանները:
4. Որոշվեց «Տնտեսագիտություն» և «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությունների վերանայված ուսումնական պլանները կիրարկել 2019թ. սեպտեմբերի 1-ից:
5. Քննարկվեցին պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդի որակավորման գործը:
6. Կայացավ փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով պրոֆեսորի գիտական կոչում շնորհվեց՝ Սարգիս Շավարշի Ստեփանյանին՝ Ը.00.00., «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ:
7. Քննարկվեց համալսարանի ամբիոնի վարիչների թափուր պաշտոնների հավակնորդների անձնական գործերը:
8. Կայացավ փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով՝ ամբիոնի վարիչներ ընտրվեցին հետևյալ

անձինք. *Արտավազդ Ավետիքի Արզումանյան*՝ Շինարարական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արտադրության տեխնոլոգիայի ամբիոն, *Աննա Կառլենի Քարամյան*՝ Ջերմագազամատակարարման և օդափոխության ամբիոն, Մանվել Զախարի Պողոսյան՝ Գծագրություն և համակարգչային գրաֆիկայի ամբիոն, Սուրեն Վլադիմիրի Թովմասյան՝ Ինժեներական գեոդեզիայի ամբիոն, Արտաշես Արսենի Մելիքյան՝ Ինտերիերի և էքստերիերի դիզայնի ամբիոն:

9. Հաստատվեցին հայցորդների և ասպիրանտների ատենախոսական թեմաները և գիտական ղեկավարները:

**Գիտական խորհրդի նիստ 21.05.2019թ.**

1. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի բոլոր կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի 2019-2020 ուստարվա ժամանակացույցների և դասընթացների ծրագրերի հաստատման մասին:
2. Ամբիոնի վարիչների աշխատանքի վարձատրության չափի որոշման և պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձի բարձրացման մասին:
3. Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչման հավակնորդների որակավորման գործերի քննարկում և փակ գաղտնի քվեարկության անցկացում:
4. Ատենախոսական թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին:
5. Ընթացիկ հարցեր:

***Օրակարգային հարցերի որոշումների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝***

1. *Հաստատվեց Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի բոլոր կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի 2019-2020 ուստարվա ժամանակացույցները:*
2. Հաստատվեց «Տնտեսագիտություն», «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությունների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ընդգրկված դասընթացների ծրագրերը:
3. Հաստատվեց «Ամբիոնի վարիչի վարչական գործառույթների համար վարձատրության չափի որոշում» նորմերը:
4. Որոշվեց վերանայել 2018թ. սեպտեմբերի 1-ից գործող «Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձի վարձատրության չափի սանդղակը» այնպես, որ 2019թ. սեպտեմբերի 1-ից կատարվի աշխատավարձի նոր բարձրացում՝ համալսարանի ֆինանսական հնարավորությունների սահմաններում:
5. Քննարկվեցին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչման հավակնորդների որակավորման գործերը:

6. Կայացավ փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով՝ պրոֆեսորի գիտական կոչում շնորհվեց հետևյալ անձանց՝ *Էմմա Պապինի Հարությունյանին*՝ ԺԸ.00.01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ, *Կարո Վրեժի Վարդանյանին*՝ԺԸ.00.03, «Կերպարվեստ» մասնագիտությամբ: Դոցենտի գիտական կոչում շնորհվեց հետևյալ անձանց՝ *Վահան Բագրատի Նռանյանին* Ե.23.03, «Շինարարություն» մասնագիտությամբ: *Տաթևիկ Մկրտչի Աշչյանին*՝Ժ.01.00, «Գրականագիտություն» մասնագիտությամբ:
7. Հաստատվեցին հայցորդների և ասպիրանտների ատենախոսական թեմաները և գիտական ղեկավարները:

**Գիտական խորհրդի նիստ 28.03.2019թ.**

1. Համալսարանի կառուցվածքում փոփոխություններ կատարելու մասին:
2. Ճարտարապետություն մասնագիտության բակալավրի ավարտական աշխատանքի թեմայի ընտրությանը, կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին:
3. Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչման հավակնորդների որակավորման գործերի քննարկում և փակ գաղտնի քվեարկության անցկացում:
4. Ատենախոսական թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին:
5. Ընթացիկ հարցեր:

*Օրակարգային հարցերի որոշումների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն*՝

1. *«Գիտաարտադրական և փորձարարական կենտրոնը» վերանվանվեց «Փորձաքննությունների և հետազոտությունների կենտրոն»:*
2. Հաստատվեց «Ճարտարապետություն մասնագիտության բակալավրի ավարտական աշխատանքի թեմայի ընտրությանը, կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները» ներկայացնող փաստաթուղթը:
3. Քննարկվեց դոցենտի գիտական կոչման հավակնորդի որակավորման գործը:
4. Կայացավ փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով դոցենտի գիտական կոչում շնորհվեց. *Միհեր Լևոնի Չերքեզյանին*՝ ԺԸ.00.01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ:
5. Հաստատվեցին հայցորդների և ասպիրանտների ատենախոսական թեմաները և գիտական ղեկավարները: